## 3. ՕԽՏԸ ՔՈՒՐ

Ինո՛ւմ ա չինո՛ւմ մին մարթ, մինգյել մին կնեգյ։ Սահանց ինո՛ւմ ա օխտը ախճիգյ։ Էտ մարթին կնեգյը մըեռնում ա, տա քյինա՛մ ա մին օրիշ կնեգյ պիրում։ Էտ կնեգյն էտ խուխոցը նհետ բիրըշում չար, մարթին ըստիրում ա, ասում.—Տա՛ր ծմակումը կուրցրու, ե՛ք։

Էտ մարթը խուխոցը հըվաքում ա, մինգյել մին աղե պիլիթ նհետը յոր օնում, քյինա՛մ։ Վըեր հըսնում ըն մին խոր ծմակ, մաշնակ քուրն ասում ա.—Ապա, ծարավ ըմ։ Հա՛րը պիլիթը թուլուլ ա տամ, ասում.—Հետան քյեցեքյ, հիշտեղ վըեր վըեննը կենա, ընդեղ ախպո՛ւր ա տո՛ւս կյըլական, կըխմեքյ։

Հա՛րը պիլիթը թուլուլ ա տամ, ըխճըկեքյը հետան քյինա՛մ ըն։ Հա՛րը չոխան քցո՛ւմ ա ծառավը, ինքյը փախճում, քյինա՛մ տոն։

Ըխճըկեքյը պիլիթին հետան քյինամ ըն, ճո՛ւր չըն քթենո՛ւմ։ Ետ ըն տըեռնում, թա քյինա՛ն հորը կոշտը, եշում ըն, տըեսնում հորը չոխան քցա՛ծ ծառավը, գյո՛ւդո՛ւմ ըն թա ո՛ւրա՛նց հա՛րը փադ ա տըեռալ, հղեն շիլ ըն ինգյո՛ւմ, կարում չըն քյինա՛ն տոն։

Սովըծանում ըն։ Գյո՛ւդո՛ւմ չըն, թա հինչ անեն։ Ըստեղ կուճուր քուրն ասում ա.—Դե վըեր սովըծացալ ըքյ, ինձ մուրթեցեքյ, կերեքյ։ Տահանք ասում ըն.—Պա քու աչկերըտ պեց, քեզ հունց մո՞րթենքյ։ Տա ասում ա.—Դե վըեր օղում չըք իմ աչկերըս պեց մորթեքյ, ես քոն ինիմ, էն վախտը ինձ մուրթեցեքյ, կերեքյ։

Կուճուր քուրը վըեր քոմավ ա հընցնում, մնացած քուվերքը

ըսկսում ըն տրա կըլո՛խը քթըվնըլ։ Վըեր կըլո՛խը քթըվում ըն, քթը-
վում, քուվորցան մինը բո̈ւրդա̈ն ասում ա.—Ա՛քա, ա՛քա, հասե՛
մին չա̈մո̈ւչ։ Տահանք ասում ըն՝ հոր ա՞։ Տա ասում ա՝ կեբե։

Մինգյել նորից ըն կուճուր քվորը կըլո՛խը քթըվում, էլլա էտ
քուրն ասում ա.—Ա՛քա, ա՛քա, հասե՛ մին չա̈մո̈ւչ։ Տահանք ասում
ըն՝ հոր ա՞։ Տա ասում ա՝ կեբե։ Իտի կըլո՛խը քթըվելավ քյինա̈մ
ըն, քյինա̈մ, հըսնում մին մըեծ կյուղ։ Հո̈ւրթա̈վը նի յըն մննում,
տըեսնում կյուղումը շատ ծիյանք կապած, ըռըչներեն էլ չա̈մո̈ւչ
վըեր ածած։ Տահանք թաքավըրերեն ծիյանքն ըն խնո̈ւմ, չա̈մշավ
ըն խնո̈ւմ պըհելիս։

Ըստեղ վըեր շատ կենում ըն, թաքավըրերեն ծիյանցը նհետ
չա̈մո̈ւչն օտում, ծիյանքը լըղարում ըն։ Թաքավըրերեն նո̈քյա̈րը
կյամ ա տըեսնում լըղարած։ Կյողլ ըն կենում, էտ ըխճըկորանցը
փոնտռում, տանում թաքավըրերեն կոչտը։ Թաքավըրերը տահանց
հըրցնում ա, թա տուք հինչ խըըթ-միլյա̈թ ըք, վըեր եկալ ըք նի
մտալ իմ ծիյանցըս կյումը, ծիյանցըս չա̈մո̈ւչը օտում, լըղըրցնում։
Տահանք ըսկսում ըն ո̈ւրա̈նց կլխավն անց կացածը նաղլ անելը։

Տրանա եար թաքավըրերն էտ ըխճըկորանցը մին-մին հըրցը-
նում ա, թա տու հինչ կըկա՞րես անես, մինն ասում ա՝ ես լա̈վ
լուվաց կանեմ, մինն էլ ասում ա՝ ես լա̈վ խմոր կըհումցեմ, մինն
էլ թա՝ ես լա̈վ հաց կըթըխեմ, էն մինը թա՝ լա̈վ խորագյ կփիմ,
տի ամեքյա մին պեն ըն ասում, տահանց մաչին ամենակուճուրեն
էլ վըեր թաքավըրերը հըրցնում ա թա պա տո՞ւ հինչ կըկարես
անես, տա ասում ա.—Ես կօտեմ, խմեմ, լա̈վ վըսկըքյա̈քյո̈ւլ տղեքյ
պիբիմ։

Տրանա եար լոխ քյինա̈մ ըն ամեքյա ո̈ւրա̈նց պենին։

Թաքավըրերը պիրո̈ւմ ա հըրսանեքյ անում, կուճուր քվորն
ո̈ւրա̈ն տղեն նհետ փսակում։

Ժամանակ ա անց կենում, կուճուր քուրը մին վըսկըքյա̈քյո̈ւլ
տղա յա պիրում։ Մըեծ քուրը թաքուն էտ վըսկըքյա̈քյո̈ւլ տղան
կյուղանում ա, մին յա̈շիկյու մաչի տինո̈ւմ, տանում ծմակումը թա-
քուն տըեղ վըեր քցո̈ւմ, մին շան թուլա տինո̈ւմ յա̈շիկյին մաչին,
տանում տինո̈ւմ էտ խուխեն տըեղը, քյինա̈մ թաքավըրերեն խաբար
տամ, թա հառհնըտ մին շան թուլա յա պերա̈լ։

Թաքավըրերը ո̈ւրա̈ն մարթուցը նհետ կյամ ա, տեսնում ո̈ւրա̈ն
հառհնը ամին շան թուլա պերա̈ծ։ Դա̈ստին հրաման ա տամ, վըեր
տրան տանեն սաղ քաղաքը շոռ ածեն, ամեն կոխկավն անց կենող
ո̈ւրա̈ն հառհնեն իրեսեն թքե։ Իտի յել անում ըն։

Թաքավըրերեն հառհնը քըղաքումը շոռ ըծելիս լոխ կյամ ըն տրա իրեսեն թքում, անց կենում գյինըմ։

Մեհենգյ մարը թողենքյ ըստեղ, գյինանք տըեսնանք տղա՞ն հինչ տըեռավ։

Մըեծ քուրն էտ վըսկըքյաքյուն տղեն վըեր քցում ա դրաղ տըեղ, մին չոքան ռուշան պըհելիս էծերը ամեն օր պիրում ա ըտեղավ անց կըցընում, մին պըռավու էծ կյամ ա միշտ էտ խուփեն ծըեծ տամ, գյինըմ։ Իտի մին քանի օր էտ էծը վըեր տրան ծըեծ ա տամ գյինըմ, մին օր էլ էտ իծատեր պառավը կյամ ա էտ չուքանեն յիրա կոն, ասում էծըս քանի օր ա քթած ա կյամ տոն, տու վըս քթում, պեց թողում։ Էտ չոքանը թա՝ ես խաբար չոնեմ, եք էծիտ բուռը պահե, տես հի՞շտեղ ա գյինըմ, վըեր եռնան ինձ շառավ չի տաս։

Էտ պառավը գյինըմ ա էծին բուռը պահում, տըեսնում էծը գյինաց մին դրաղ տըեղ, կռացավ մին խուփու ծըեծ տուվավ, հըռացավ։ Պառավը գյինըմ ա էտ վըսկըքյաքյուն տղան յոր օնում, տանում, պահում։

Մին քանի օրան եռը թաքավըրերեն մարթիքյը կյամ ըն տըեսեռ ժողովուրթեն էլ հըվաքում, տանում, վըեր էտ թաքավըրերեն հառհնեն իրեսեն թքեն։ Լոխճինին հըվաքում ըն տանում, էտ պըռավեն ան վըսկըքյաքյուն տղեն էլ նհեռը։ Էտ պըռավեն էլ վըեր տանում ըն թաքավըրերեն հառհնեն իրեսեն թքում ա, եռնան էլ էտ վըսկըքյաքյուն տղեն ըն ասում թա թքե, նա ասում ա.—Տուք եր մոր իրեսեն կըթքըքե՞քյ։ Նահանք հըրցնում ըն, թա խե սա քու մար ա՞։ Սա թա՝ հա՛, իմ ինիլյաս եռն իմ մըրաքուր եկյալ ա ինձ եր կալալ տարալ տիրալ ծմակումը, իմ տըեղըս մին շան թուլա տիրալ։

Խաբարը հըսնում ա թաքավըրերենն։ Թաքավըրերն ռուշան հառհընեն եռ ա յոր օնում։ Մըեծ քվորն էլ պիրում ա ծիլին հաքյվան կապում, քաշ-քաշ անում, ըսպանում։